ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

«Բնագիտություն», «Մաթեմատիկա», «Տեխնոլոգիա», «Ես և շրջակա աշխարհը» առարկաների մեթոդական միավորման նիստի

Նիստը կայացել է 2026 թվականի սեպտեմբերի 28-ին: Մասնակցողների թիվը՝ 9: Մասնակցողների անուն, ազգանուն՝

1. Անգին Սահակյան
2. Ալինա Թորոյան
3. Անահիտ Անդրեասյան
4. Կարեն Գիժլարյան
5. Ամալյա Խուբլարյան
6. Սուսան Գորգինյան
7. Մարինե Պողոսյան
8. Անուշ Խաչատրյան
9. Տատյանա Սարգսյան

Օրակարգում՝

1. Մեթոդական միավորման նիստի օրակարգի հաստատում (զեկուցող՝ ՄՄ ղեկավար Ա. Սահակյան):
2. Նախորդ մեթոդական միավորման նիստի որոշումների կատարման ընթացքի քննարկում (զեկուցող՝ ՄՄ ղեկավար Ա. Սահակյան):
3. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների անհատական ուսուցման պլանների քննարկում և, ըստ անհրաժեշտության, առաջարկությունների ներկայացում (զեկուցող՝ ՄՄ ղեկավար Ա. Սահակյան):
4. Էլեկտրոնային մատյանների լրացման մշտադիտարկում (զեկուցող՝ տնօրենի տեղակալ Լ. Մանվելյան):
5. Առարկաների դասավանդման և ուսումնառության որակի ուսումնասիրություն (զեկուցող՝ ՄՄ ղեկավար Ա. Սահակյան):

ԼՍԵՑԻՆ 1

Մեթոդական միավորման ղեկավար Ա.Սահակյանը ներկայացրեց 2026 թվականի սեպտեմբերի 28-ին նախատեսված մեթոդական միավորման նիստի օրակարգի նախագիծը՝ ներառված 5 հարցերով, զեկուցողներով և քննարկման հիմնական ուղղություններով:

Նշվեց, որ օրակարգը մշակվել է՝ հիմք ընդունելով մեթոդական միավորման տարեկան աշխատանքային պլանը, ուսումնական գործընթացի կազմակերպման առաջնահերթությունները և ընթացիկ աշխատանքային խնդիրները: Ընդգծվեց, որ օրակարգում ընդգրկված հարցերն ուղղված են ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը, մեթոդական աշխատանքների համակարգմանը և առաջադրված խնդիրների համատեղ քննարկմանը:

ԼՍԵՑԻՆ 2

Մեթոդական միավորման ղեկավար Ա. Սահակյանն ամփոփեց նախորդ՝ 2026 թվականի սեպտեմբերի 3-ի նիստում ընդունված որոշումների կատարման ընթացքը:

ՄՄ քարտուղար Ա. Խուբլարյանը տեղեկացրեց, որ նիստի արձանագրությունը կազմվել և էլեկտրոնային եղանակով ներկայացվել է սահմանված՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

ՄՄ ղեկավարը ներկայացրեց, որ ԿԳՄՍ նախարարի 2025 թվականի մարտի 25-ի N 09-Լ հրամանի 2-րդ գլխի 9-րդ կետին համապատասխան՝ հավանության արժանացած «Աշուն», «Երկնային մարմիններ» և «Հարթապատկերային զարդաքանդակ» ուսումնական նախագծերի պլանները ներկայացվել են տնօրենին և հաստատվել:

Անդրադարձ կատարվեց նաև «Երթևեկության կանոններ» իրազեկման դասի կազմակերպմանն ու իրականացմանը: Նշվեց, որ այն անցկացվել է սահմանված ժամկետում՝ հաշվի առնելով սովորողների

կրթական առանձնահատկություններն ու հնարավորությունները: Աշխատանքները պատշաճ կերպով համակարգել է ՄՄ անդամ Ալինա Թորոյանը:

Թեմատիկ պլանների՝ ԴԿՏՀ նոր համակարգ մուտքագրման վերաբերյալ նշվեց, որ գործընթացը դեռևս ամբողջությամբ ավարտված չէ: Աշխատանքների ընթացքի վրա ազդել են համակարգի տեխնիկական խնդիրները և որոշ ուսուցիչների հաշիվների հասանելիության դժվարությունները: Կարևորվեց մուտքագրման աշխատանքների ավարտը և առկա թերությունների շտկումը:

ԼՍԵՑԻՆ 3

ՄՄ ղեկավար Ա. Սահակյանը ներկայացրեց կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների անհատական ուսուցման պլանների իրականացման ընթացքը: Անդրադարձ կատարվեց ԱՈՒՊ-ներով սահմանված ուսումնառության նպատակներին, նախատեսված աշխատանքներին և սովորողներին տրամադրվող աջակցությանը:

ՄՄ անդամները ներկայացրին իրենց դիտարկումներն ու առաջարկությունները՝ կարևորելով ուսումնական գործընթացի կազմակերպումը սովորողների անհատական կրթական կարիքներին, կարողություններին և ուսումնառության առանձնահատկություններին համապատասխան: Ընդգծվեց ԱՈՒՊ-ներով նախատեսված աշխատանքների հետևողական իրականացման, սովորողների առաջընթացի պարբերական արձանագրման և անհրաժեշտության դեպքում պլանների վերանայման առաջարկությունների ներկայացման կարևորությունը:

ԼՍԵՑԻՆ 4

Տնօրենի տեղակալ Լ. Մանվելյանը ներկայացրեց էլեկտրոնային մատյանների վարման և լրացման մշտադիտարկման ընթացքը: Նշվեց, որ նախնական դիտարկումների ընթացքում անդրադարձ է կատարվել դասերի գրանցմանը, թեմատիկ պլանների մուտքագրմանը, գնահատումների և բացակայությունների վերաբերյալ տվյալների լրացման ամբողջականությանը և ժամանակին կատարմանը:

Տեղեկացվեց, որ ուսուցիչներին տրամադրվել են անհատական խորհրդատվություն և մեթոդական աջակցություն՝ էլեկտրոնային մատյանների լրացման ընթացքում առաջացած հարցերի լուծման նպատակով: Միաժամանակ նշվեց, որ ԴԿՏՀ համակարգի գործարկման և որոշ ուսուցիչների համար դրա հասանելիության հետ կապված դժվարությունների պատճառով սեպտեմբերին նախատեսված մշտադիտարկումը հնարավոր չի եղել իրականացնել ամբողջ ծավալով: Կարևորվեց համակարգի հասանելիության խնդիրների կարգավորումը և էլեկտրոնային մատյանների ամբողջական ու պատշաճ վարումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

ՄՄ անդամներն առաջարկեցին ԴԿՏՀ համակարգի հասանելիության և լիարժեք գործարկման հետ կապված խնդիրներով պայմանավորված՝ ՈՒԴԱՏՊ-ով սեպտեմբերին նախատեսված էլեկտրոնային մատյանների լրացման մշտադիտարկումն ամբողջ ծավալով իրականացնել աշնանային արձակուրդներից հետո՝ համապատասխան առաջարկությունը ներկայացնելով տնօրինությանը:

ԼՍԵՑԻՆ 5

ՄՄ ղեկավար Ա. Սահակյանը ներկայացրեց ուսումնական տարվա աշխատանքային պլանով նախատեսված առարկաների դասավանդման և ուսումնառության որակի ուսումնասիրության նպատակները, հիմնական ուղղություններն: Նշվեց, որ ուսումնասիրության շրջանակում նախատեսվում է 6-րդ դասարանում իրականացնել «Մաթեմատիկա» առարկայի դասալսումներ՝ դասավանդման որակը, չափորոշչային պահանջների իրականացումը, ուսուցման մեթոդների կիրառումը և սովորողների ուսումնառության ընթացքն ուսումնասիրելու նպատակով՝ հետևյալ ժամանակացույցով.

N	Ուսուցչի անուն, ազգանուն	Ամսաթիվ	Առարկա	Դասարան	Դասաժամ
1	Անահիտ Անդրեասյան	14.10.2026	Մաթեմատիկա	6Գ	V
2	Անուշ Խաչատրյան	14.10.2026	Մաթեմատիկա	6Բ	VI

3	Անահիտ Անդրեասյան	09.11.2026	Մաթեմատիկա	9Ա	V
4	Կարեն Գիժլարյան	10.11.2026	Մաթեմատիկա	8Գ	II
5	Անուշ Խաչատրյան	01.12.2026	Մաթեմատիկա	5Բ	III
6	Անահիտ Անդրեասյան	02.12.2026	Մաթեմատիկա	7Ա	VI
7	Կարեն Գիժլարյան	04.12.2026	Մաթեմատիկա	8Բ	IV

Կարևորվեց դասալսումների արդյունքների վերլուծությունը, արդյունավետ փորձի բացահայտումը և անհրաժեշտության դեպքում ուսուցչին մեթոդական աջակցության տրամադրումը:

Լսելով 2026 թվականի սեպտեմբերի 28-ի նիստի օրակարգային հարցերի վերաբերյալ զեկուցումները և քննարկելով ներկայացված հարցերը՝ մեթոդական միավորումը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել մեթոդական միավորման՝ 5 հարցից բաղկացած օրակարգը և նիստի աշխատանքներն իրականացնել հաստատված օրակարգին համապատասխան: Ապահովել օրակարգային հարցերի քննարկումն ու ընդունված որոշումների կատարումը սահմանված ժամկետներում: Որոշումների կատարման վերահսկողությունը վերապահել ՄՄ ղեկավարին:
2. Հիմք ընդունելով ՄՄ ղեկավարի զեկույցը նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի վերաբերյալ՝
   2.1. ուսումնական նախագծերի թեմաների ընտրության, պլանների վերջնականացման և տնօրենի հաստատմանը ներկայացման, ինչպես նաև «Երթևեկության կանոններ» իրազեկման դասի կազմակերպման և իրականացման աշխատանքները գնահատել լավ:
   2.2. ԴԿՏՀ համակարգում թեմատիկ պլանների մուտքագրման գործընթացը համարել թերի կատարված՝ հաշվի առնելով համակարգի տեխնիկական խնդիրներն ու որոշ ուսուցիչների հաշիվների հասանելիության դժվարությունները:
   2.3. Թեմատիկ պլանների մուտքագրումն ավարտել մինչև 2026 թվականի հոկտեմբերի 10-ը՝ ապահովելով դրանց ամբողջականությունն ու համապատասխանությունը սահմանված պահանջներին:
3. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների անհատական ուսուցման պլանների իրականացումը կազմակերպել՝ ապահովելով դրանցում սահմանված նպատակների և խնդիրների հետևողական իրագործումը: Ուսումնական գործընթացն իրականացնել՝ հաշվի առնելով սովորողների անհատական կրթական կարիքներն ու հնարավորությունները, պարբերաբար արձանագրել նրանց առաջընթացը և անհրաժեշտության դեպքում ներկայացնել ԱՈՒՊ-ների վերանայման ու կատարելագործման առաջարկություններ: ՄՄ ղեկավար Ա. Սահակյանին հանձնարարել համակարգել այս աշխատանքների ընթացքը:
4. Շարունակել էլեկտրոնային մատյանների լրացման նկատմամբ պարբերական վերահսկողությունը, ապահովել մատյանների ժամանակին, ամբողջական և ճշգրիտ լրացումը, ինչպես նաև արձանագրված թերությունների շտկումը: Հաշվի առնելով ԴԿՏՀ համակարգի հասանելիության և լիարժեք գործարկման հետ կապված խնդիրները՝ տնօրինությանը ներկայացնել առաջարկություն՝ ՈՒԴԱՏՊ-ով սեպտեմբերին նախատեսված էլեկտրոնային մատյանների լրացման մշտադիտարկումն ամբողջ ծավալով իրականացնել 2026 թվականի հոկտեմբերի երկրորդ կեսին:
5. Հավանության արժանացնել ՄՄ ղեկավարի ներկայացրած՝ առարկաների դասավանդման և ուսումնառության որակի ուսումնասիրության գործընթացը: Իրականացնել «Մաթեմատիկա» առարկայի դասալսումներ 6-րդ դասարանում, ամփոփել արդյունքները և քննարկել համապատասխան ուսուցչի հետ՝ անհրաժեշտության դեպքում տրամադրելով մեթոդական աջակցություն:

Առարկայական մասնախմբի ղեկավար՝ _____ **Ա. Սահակյան**

Քարտուղար՝ _____ **Ա. Խուբլարյան**

30.09.2026